նին՝ անպատճառ տեսնոել «ամենապատոական մարդու» հետ: Տարակոյս չկայ, որ փաշան հաւատացած էր, որ առաջնորդն էլ նոյն վկայութիւնը կը տար իր մասին, թէ փաշան ամենապատոական մարդն է, եւ եւրոպացի ճանապարհորդի ուղեւորութեան տետրակի մէջ կաւելանային մի քանի փայլուն խօսքեր երկրի այդ երկու բարձր ներկայացուցիչների մասին:

Փաշան ինքը մատնեց իրան, ասելով.

— Նա իմ լաւ բարեկամս է եւ իմ եռանդոտ գործակիցս է իմ բոլոր ձեռնարկութիւնների մէջ: Ես կատարեալ սիրահար եմ եւրոպական կրթութեան, պարոն բժշկապետ: Եթէ ես հրաշագործութեան շնորհ ունենայի, կաշխատէի մի քանի վայրկեանի մէջ մեր հայրենիքը Ֆրանսիայ դարձնել: Բայց դժբախտաբար այդ անկարելի է: Մենք շատ գործ ունենք կատարելու. մենք շատ ետ ենք մնացել, այժմ ստիպուած ենք թռիչքներ գործելով առաջ ընթանալ, որ հասնենք լուսաւոր ժողովուրդներին:

Մի թեթեւ ժպիտ երեւաց Ասլանի դէմքի վրայ:

— Ժողովրդի կրթութիւնը կանոնաւոր լինելու համար, — նկատեց նա, — հարկաւոր չէ թռիչքներ գործել, այլ թողնելու է նրան, որ իր բնական ընթացքով առաջ գնայ: Միայն գլխաւոր պայմանը այն պէտք է լինի, որ ժողովրդի յառաջադիմութեան ղեկը պէտք է ուղիղ ճանապարհի վրայ դրոի, որպէսզի նրանից չշեղոելով, ցանկացած նպատակին հասնի:

— Բոլորովին ճիշտ է ձեր նկատողութիւնը, — պատասխանեց փաշան գործագէտ մարդու եղանակով: — Բայց մեր դժբախտութիւնը նրանումն է, որ մեր առաջաւոր մարդիկը, խիստ սակաւ բացառութեամբ, անբարեխիղճ են: Բանի՞ անգամ առաջարկել եմ ես մեծ վէզիրին, որ այդ երկրի հարկերի մի մասը յատկացնէ նոյն իսկ այդ երկրի տեղային բարեկարգութիւնների համար գործ դնելու: Բայց միշտ մերժում եմ ստացել: Հազարաւոր բաներ կան շինելու: Օրինակ, դուք տեսաք մեր ճանապարհները, մեր կամուրջները, մեր ջրանցքները, այդ բոլորը նորոգելու կարօտ են: Վաճառականութեան եւ երկրագործութեան անկման բուն պատճառները մեր երկրում՝ պէտք է վատ հաղորդակցութիւնների մէջ որոնել:

Թուրք պաշտօնակալները բոլորը լաւ ձեւել գիտեն, բայց կտրելու շնորհք չունեն: Ճանազան ծրագրներ կազմելու մէջ՝ անհամեմատ ճարպիկ են, իսկ գործադրութեան մէջ՝ անպէտք: Տուր նրանց փող իրանց կազմած ծրագիրը իրագործելու համար, այդ փողով նախ իրանց գրպանը կը լիացնեն: